

Ա Ր Ճ Ա Ն Ա Ղ Ր Ո Յ Ո Ւ Ն N 4

Երևանի պետական համալսարանի
2011 թ. ապրիլի 21-ի գիտական խորհրդի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 104 անդամներից 82-ը:
Խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց
հաստատել հետևյալ օրակարգը.

Օրակարգ.

1. Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում:
(Ձեկ.՝ Է. Վ. Չուբարյան, Հ. Լ. Սարգսյան)
2. Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ
մագիստրատուրայի 2011/2012 ուստարվա ընդունելության կանոնակարգի
հաստատում: (Ձեկ.՝ Ուսումնամեթոդական վարչության պետ,
պրոռեկտորի տեղակալ Հ. Գ. Ժամհարյան)
3. Տեղեկատվություն ԵՊՀ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի
գործունեության մասին: (Ձեկ.՝ Շրջանավարտների և կարիերայի
կենտրոնի տնօրեն Լ. Տ. Հակոբյան)
4. Տեղեկատվություն ԵՊՀ Հումագիտության գիտաուսումնական կենտրոն-
գրադարանի գործունեության մասին:
(Ձեկ.՝ ՀԳԿԳ տնօրեն Լ. Գ. Հակոբյան)
5. Տեղեկատվություն ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային
հետազոտությունների կենտրոնի գործունեության մասին:
(Ձեկ.՝ ՔՄՀ կենտրոնի տնօրեն Դ. Ա. Հովհաննիսյան)
6. Տեղեկատվություն ԵՊՀ Ռուսական կենտրոնի գործունեության մասին:
(Ձեկ.՝ Ռուսական կենտրոնի տնօրեն Ա. Ս. Ներսեսյան)
7. Ընթացիկ հարցեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանը
հանդես եկավ ներածական խոսքով:

Լսեցին. - Գոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը:

Մրցութային հանձնաժողովների նախագահներ Է. Չուբարյանի և Հ. Սարգսյանի՝ մասնակիցներին ներկայացնելուց հետո թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ:

Գոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

- | | | | |
|----|---------------------------------|--|--|
| 1. | Հայրապետյան Գրիգոր
Ռ-աֆայելի | միջազգային
տնտեսական
հարաբերությու
նների ամբ.
ասիստենտ | տնտեսագիտ. թեկնածու /2004/
Ը.00.06 – համաշխարհային տնտեսագիտություն |
| 2. | Ղազարյան Ռուզան Ռ-աֆայելի | անգլերեն լեզվի
թիվ 2 ամբ.
ասիստենտ | բանասիր. գիտ. թեկնածու /2009/
Ժ.02.07 - գերմանական լեզուներ |
| 3. | Պողոսյան Օֆելյա Շահենի | անգլիական
բանասիրությա
ն ամբ.
ասիստենտ | բանասիր. գիտ. թեկնածու /2009/
Ժ.02.07 - գերմանական լեզուներ |

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

- | | | | |
|----|-------------------------------|--|---|
| 1. | Սարիբեկյան
Ամալյա Սարիբեկի | կառավարման և
գործարարությա
ն ամբ. դոցենտ | տնտեսագիտ. թեկնածու /1990/
Ը.00.02 – տնտեսության, նրա ճյուղերի
տնտեսագիտ. և կառավարում
դոցենտ /2004/ |
|----|-------------------------------|--|---|

Քվեարկությանը մասնակցեցին 82 անդամ:

Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սաղյան Աշոտ – նախագահ

Խաչատրյան Համբարձում

Փիրումյան Գևորգ

Մուրադյան Սամվել

Վարազյան Վահագն

Գոցենտի կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի – կողմ - 76, դեմ -6, անվավեր – 0
2. Դազարյան Ռուզան Ռաֆայելի – կողմ - 76, դեմ -6, անվավեր – 0
3. Պողոսյան Օֆելյա Շահենի – կողմ - 76, դեմ -6, անվավեր – 0

Պրոֆեսորի կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի – կողմ - 62, դեմ -20, անվավեր - 0

Որոշեցին. –1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

2. Վերոհիշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:
3. 15 օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել բոհ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ շնորհելու համար:

2. Լսեցին. - Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2011/2012 ուստարվա ընդունելության կանոնակարգի հաստատում: (Ձեկ՝ Ուսումնամեթոդական վարչության պետ, պրոռեկտորի տեղակալ Հ. Գ. Ժամհարյան)

Որոշեցին. Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2011/2012 ուստարվա ընդունելության կանոնակարգը հաստատել:

3. Լսեցին.- Տեղեկատվություն ԵՊՀ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության մասին: (Ձեկ՝ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրեն Լ. Տ. Հակոբյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. - Տեղեկատվություն ԵՊՀ Հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարանի գործունեության մասին:
(Ձեկ՝ ՀԳԿԳ տնօրեն Լ. Գ. Հակոբյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

5. Լսեցին. - Տեղեկատվություն ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գործունեության մասին:
(Չեկ.՝ ՔՄՀ կենտրոնի տնօրեն Դ. Ա. Հովհաննիսյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

6. Լսեցին. - Տեղեկատվություն ԵՊՀ Ռուսական կենտրոնի գործունեության մասին:
(Չեկ.՝ Ռուսական կենտրոնի տնօրեն Ա. Ս. Ներսեսյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

7. Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

Ընթացիկ հարցեր.

7.1. Լսեցին.- «ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի» կոչումներ շնորհելու մասին:
(Չեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին. -

8.1. Լսեցին.- «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
(Չեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան)

Որոշեցին. - «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցի քննարկումը հետաձգել: